

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2022թ. մարտի 3-5-ը Ռուսաստանի Դաշնություն՝ քաղաք Մոսկվա և Բելառուսի Հանրապետություն՝ քաղաք Գորկի կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Արման Խոջոյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն՝ ք. Մոսկվա և Բելառուսի Հանրապետություն՝ քաղաք Գորկի, 2022թ. մարտի 3-5-ը

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը՝

- Մասնակցություն «ԵԱՏՄ շրջանակներում գյուղատնտեսական բույսերի սերմերի ընդհանուր շուկայի զարգացման հեռանկարները» խորագրով կլոր սեղան քննարկմանը
- Այցելություն ռուսական «Միրատորգ» գենետիկական սելեկցիայի կենտրոն

6. Քննարկված թեմաները՝

- ԵԱՏՄ անդամ պետությունների միջև սերմերի և տնկանյութերի փոխադարձ առևտրի ընդլայնման և գյուղատնտեսական ապրանքների արտադրության խթանման հարցերի քննարկում
- Ծանոթություն «Միրատորգ» ագրոարդյունաբերական հոլդինգի գործունեությանը

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

- 2022թ. մարտի 5-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյանը Բելառուսի Հանրապետության Մոգիլյովի մարզի Գորկի քաղաքում, Բելառուսի պետական գյուղատնտեսական ակադեմիայում (ԲՊԳՏԱ) մասնակցել է բույսերի գենետիկ ռեսուրսների բելառուսական ազգային նմուշապահոցի մասնաճյուղի ցուցասրահի բացմանը: Հանդիսավոր արարողությանը մասնակցել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) կոլեգիայի նախագահ Միխայիլ Մյասնիլովիչը, ԵՏՀ կոլեգիայի անդամ, արդյունաբերության և ագրոարդյունաբերական համալիրի հարցերով նախարար Արտակ Քամայանը, ԲՊԳՏԱ ռեկտոր Վիտալի Վելիկանովը, Մոգիլյովի մարզային գործադիր կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Անատոլի Ուլասևիչը, ինչպես նաև բելառուսական սերմնաբուծական կազմակերպությունների ղեկավարներ:

Այցի շրջանակներում կազմակերպվել է «ԵԱՏՄ շրջանակներում գյուղատնտեսական բույսերի սերմերի ընդհանուր շուկայի զարգացման հեռանկարները» խորագրով կլոր սեղան քննարկում: Միջոցառման ընթացքում համակողմանիորեն դիտարկվել են սերմնաբուծության և սելեկցիայի բնագավառում նոր միտումները, ԵԱՏՄ անդամ պետությունների միջև սերմերի և տնկանյութերի փոխադարձ առևտրի ընդլայնման և գյուղատնտեսական ապրանքների արտադրության խթանման հարցերը:

Ներկայացնելով Հայաստանում սերմնաբուծության ներկա վիճակն ու հնարավորությունները՝ Արման Խոջոյանը իր խոսքում նշել է, որ Հայաստանն այս ոլորտում ունի զարգացման մեծ ներուժ, որին հատկապես նպաստում են բարենպաստ բնակլիմայական պայմանները: Խոսելով սերմնաբուծության ոլորտում Հայաստանի ձեռքբերումների մասին՝ կարևորվել է Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի գործունեությունը, որը զգալի ավանդ ունի Հայաստանի սերմնաբուծության զարգացման հարցում. գիտական կենտրոնում ստեղծվել են 18 բանջարաբուստանային մշակաբույսերի 150 սորտեր: Այստեղ պահպանվում է տեղական սորտերի և պոպուլյացիաների հարուստ գենոֆոնդ, որն ընդգրկում է 3850 նմուշներ: Նշված թվերը վկայում են Հայաստանում առկա մեծ ներուժի մասին, և այդ

կարողությունների օգտագործումը կարող է մեծապես նպաստել ԵԱՏՄ տարածքում ոլորտի հետագա զարգացմանը:

Քննարկման ընթացքում առանձնակիորեն շեշտվել է ներկայումս ներմուծվող այնպիսի մշակաբույսերի սերմերի բուծումն ու սելեկցիան, ինչպիսիք են եգիպտացորենը, ճմեռային տարեկանը, արևածաղիկը, շաքարի ճակնդեղը, բազմամյա խոտաբույսերը, բանջարեղենը, մրգերն ու հատապտուղները:

Աշխատանքային այցի շրջանակում այցելություններ են եղել «ԲՊԳՏԱ ուսումնական տնտեսություն» հանրապետական ունիտար ձեռնարկության դպրոց-ֆերմա, ձկնաբուծական ինդուստրիալ-արտադրական համալիր և ճշգրիտ հողագործության կենտրոն:

- Այցելություն «Միրատորգ» ագրոարդյունաբերական հոլդինգ և «Միրատորգ»-ի գենետիկական սելեկցիայի կենտրոն: Միրատորգը Ռուսաստանի ագրոարդյունաբերական համալիրի միս արտադրող և վերամշակող խոշորագույն կազմակերպություններից է: Տարեկան կտրվածքով կենտրոնը մշակում է շուրջ 1 մլն հա գյուղատնտեսական նշանակության հողատարածք, բուծում է շուրջ 1 մլն. գլուխ խոշոր եղջերավոր կենդանի, 3 մլն. խոզի գլխաքանակ, արտադրում՝ 75 մլն. ձու: «Միրատորգ» լաբորատորիան, որը հազեցած է նորարարական ավտոմատացված սարքավորումներով, ըստ արտադրողականության, ընդգրկված է գենետիկական սելեկցիայի բնագավառում աշխարհի 10 լավագույն լաբորատորիաների ցանկում: «Միրատորգ» ագրոարդյունաբերական հոլդինգի գենետիկական սելեկցիայի կենտրոնը ԵԱՏՄ անասնաբուծության մեջ ԴՆԹ տեխնոլոգիաների հետազոտման և գործնական կիրառման տարբեր տեսակների կենսաբանական նմուշների գենոտիպավորման լայն հնարավորություններ ունի և կարող է լուծել յուրահատուկ գենետիկ բազայի ստեղծման խնդիրները՝ ԵԱՏՄ անդամ երկրներում անասնաբուծության ոլորտում արտադրողականության՝ կաթնատվության, մսատառվության բարձրացման նպատակով: Անցումը գենետիկական սելեկցիային կապահովի գենետիկ առաջընթացի արագացում, թույլ կտա ստեղծել տոհմային անասնաբուծության որակապես նոր համակարգ՝ հաշվառման, վերահսկողության, ցուցանիշների որոշման արդիականացված գործընթացով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

09.03.2022թ.

